ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ — РЕЦЕНЗИИ

Դ—Ր ՍԱԼԵՀ ԶԱՀՐ ԱԴ-ԴԻՆ, ՀԱՅԵՐԸ. ժողովուրդ և պրոբլեմ. աք-Թակադումիա հրատարակչություն. Բեյրութ. 1988. 336 էջ (արաբերեն)

الدكتور صالح زهر الدين ' الارمن شعب وقضية ' دار التقدمية
بيروت ' ١٩٨٨ ' ٣٣٦ صفحة

Գրախոսվող մենագրությունը Օսմանյան կայսրությունում հայկական ցեղասպանության և առհասարակ Հայկական հարցի նկատմամբ արաբական Արևելքի երկրներում վերջին տարիներին աճող հետաքրքրության մի նոր վկայություն է։ Նրա հիմնական նպատակը, ինչպես դժվար չէ նկատել, ոչ այնքան հետազոտական խոր քննություն կատարելն է, որքան արար մտավորականության դատին հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի ողբերգական էջերը ներկայացնելը։ Այդ նպատակադրումով էլ պայմանավորված են թե՛ գրքի կառուցվածքը և թե՛ քննարկվող խնդիրները։ Նրա յոթ գլուխներում ընդգրկված բաղում հարցերը սերտորեն փոխկապակցված են և հանդիսանում են միմյանց տրամաբանական շարունակությունը։

Սալեհ Զահր ադ-Դինի աշխատությունը դրված է աղբյուրագիտական լայն հենքի վրա, որտեղ օգտագործվել են Հայկական հարցին նվիրված եվրոպական, ռուսերեն, արաբերեն լեզուներով տարաբնույթ սկզբնաղբյուրներ, գիտական գրականություն, ինչպես նաև պարբերական մամուլի նյութերը։ Դրա շնորհիվ էլ արաբ պատմաբանին հաջողվել է շարադրել մի ինքնատիպ աշխատություն, որն ընթերցողին հանգամանորեն ծանոթացնում է Հայկական հարցի հետ՝ իր բոլոր մանրամասնություններով։ Գիրքը աչքի է ընկնում կուռ շարադրանքով և հետաքրքրական եզրահանգումներով։

Մենագրության նախաբանում Սալեհը ընդհանուր գծերով ներկայացնում է հայ ժողովրդին, առանձնակի ձևով շեշտում է նրա անցած պատմական անհարթ ուղին, ապրելու և արարելու աներևակայելի ձգտումը։ Հայկական հարցը համարելով համայն մարդկության խղճի գործ՝ արար պատմաբանն իր գրքի հրապարակումը պատճառաբանում է որպես այդ հարցին հավատարիմ մնալու, այն պաշտպանելու նվիրական դրսևորում (էջ 8)։

Աշխատության առաջին գլխում (Հայերի օջաղումը, նրանց հայրենիքն ու մշակույթը) հեղինակը ամենից առաջ կանգ է առնում հայերի, որպես Հայկական լեռնաշխարհի էթնիկական հնագույն միավորի, տեղաբնիկ լինելու գաղափարի վրա։ Նրա կարծիքով Հայկական լեռնաշխարհում հայերը ապրել են նախապատմական անհիշելի ժամանակներից, կենաց-մահու պայքար են մղել օտարերկրյա նվաճողների դեմ՝ աշխարհին տալով նյութական և հոգևոր մշակույթի անմահ հուշարձաններ։ Ապա նա ավելացնում է, որ մարդաբանական, մշակութային, լեզվական և օժանդակ այլ նյութեր միաբերան հաստատում են, որ հայերը եղել են իրենց լեռնաշխարհի տեղաբնիկներ և լայն շփումներ են ունեցել հարակից տարածքների աշխարհի հնագույն ժողովուրդների՝ խեթերի, շումերների, բաբելոնացիների, ասորիների և այլոց հետ (էջ 15—17)։ Բացի այդ, հեղինակը համառոտակի անդրադառնում է Հայաստանի աշխարհագրությանը՝ դգալի ուշադրություն հատկացնելով հայկական մշակույթին, հարևան ժողովուրդների հետ ունեցած փոխառնչություններին, հայերեն դասական թարգմանություններին։ Այլևայլ հարցերի քննարկման թվում Սալեհը կանգ է տալիս մասնավորապես Հայաստանում քրիստոնեության պաշտոնապես ընդունման և Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծման վրա։ Նրա կարծիքով, պատմական այդ երկու խոշոր իրադարձությունները հիրավի ճակատագրական մեծ նշանակություն ունեցան հայ ժողովրդի կյանքում, խոր հետք թողնելով ընդհանրապես Հայաստանի գաղափարական, քաղաքական, մշակութային բոլոր բնագավառների վրա, նպաստեցին հայ ժողովրդի վերածննդին» (էջ 27)։ Արար պատմաբանը մասնավորապես ընդգծում

է «հանճարեղ գիտնական» Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծված ինքնատիպ այբուբենի դերը հայկական ազգային մշակույթի զարգացման գործում՝ այն համարելով հայ ժողովրդի «ինքնապաշտպանության հզոր զենք»։ Հայկական այբուբենը, դրում է նա, ոչ միայն պահպանեց հայ ժողովրդին, հայ մարդու հոգեկան կերպարանքը, այլև առաջին հերթին «հայկական մշակույթը փրկեց ձուլման վտանգից, որը նրան սպառնում էր թե՛ արևելքից և թե՛ արևմուտքից՝ սասանյան պետության և բյուզանդական կայսրության կողմից» (էջ 31)։

Մենագրության երկրորդ գլխից (Հայերի վիճակը Թուրքիայի լծի ներքո) արար պատմաբանն անցնում է իր բուն շարադրանքին՝ Հայկական հարցի և ցեղասպանության խնդիրների լուսաբանմանը։ Փաստական հարուստ նյութի համադրության շնորհիվ հեղինակը ցույց է տվել հայկական ջարդերի նախադրյալները, պատճառները, Արևմտյան Հայաստանի ծանր կացությունը։ Այդ առիթով նախ և առաջ նա փորձում է վերլուծել հայ-քրդական փոխհարաբերությունները, բանի որ, ինչպես ինքն է նշում, օսմանցիները ընդդեմ արևմտահայության ամենից առաջ դինեցին քուրդ ազգաբնակչությունը։ Մինչև հայկական կոտորածները, Սալեհի կարծիքով, հայ-քրդական հարաբերությունները քիչ թե շատ բարիդրացիական էին։ Օսմանյան կայսրության ղեկավար շրջանները հայ-քրդական դաշնակցությունը դիտում էին իբրև հակաթուրքական վտանգավոր հետևանքներով հղի մի երևույթ։ Այդ դաշնակցության մեջ սեպ խրելու նպատակով մշակվեց հատուկ մի ծրագիր, որի համաձայն քրդական ցեղերի բոլոր տեսակի խլրտումները, հուզումները ուղղվեցին հայերի դեմ։ Նման քաղաքականությամբ օսմանյան կառավարությունը հասավ իր նպատակին, չնայած քուրդ առանձին ցեղապետեր կռահեցին թուրքերի հրեշավոր նպատակները և երբեմն փորձեցին խուսափել ընդհարումներից, չենթարկվել թուրքական այդ պրովոկացիային։ Այնուհանդերձ, քրդական վերնախավը, թուրք ղեկավար մարմինների հետևողական քաղաքականության շնորհիվ, հետզհետե գնաց այդ քայլին։ Դրան գումարվեցին հայկական նահանգներում բնակեցված չերքեզների ահաբեկիչ գործողությունները, որոնք մեծապես խրախուսվում էին պետության կողմից։

Արևմտահայության ոտնահարված իրավունքները, նրանց նկատմամբ կիրառվող կամայականությունները, անմարդկային հալածանքները զանգվածային արտագաղթի ալիք առաջացրեցին ողջ կայսրությունում։ Ղեկավար շրջանների հրահանգներով հայկական լքված վայրերը սկսեցին բնակեցվել քրդերով, որոնք շատ հաճախ սիրահոժար էին դիմում այդ քայլին։ Քրդերի կողմից գերեվարումը, կողոպուտը, ավերածությունները, ավելացնում է հեղինակը, դարձան առօրյա սովորական երևույթ Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր նահանգներում։

Մենագրության նույն գլխում քննական վերլուծության են ենթարկվում 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Սան Սթեֆանոյի վեհաժողովը և այլ խնդիրներ։ Սալեհն այդ առթիվ ընդգծում է, որ «հայերի, թերևս, մեծագույն սխալը նրանում էր, որ իրենց իղձերի իրագործման նպատակով հույսը կապեցին մեծ տերությունների հետ, երբ այդ նույն ուժերը ավելի շատ մտահոգված էին իրենց՝ սեփական շահերով» (էջ 52)։ Այդ հանգամանքը, ըստ արար պատմաբանի, բացասաբար անդրադարձավ արևմտահայության միաբանության և հավաքականության վրա, էլ ավելի վատթարացնելով նրանց վիճակը կայսրությունում։ Ապա նա խիստ քննադատում է «Համիդյան» ցեղերի կատաղի և վայրագ գործողությունները Արևմտյան Հայաստանի խաղաղ բնակչության նկատմամբ, նշում, որ այդ ցեղերի ստեղծումը, որոնց հիմնական կորիզն էին հանդիսանում դարձյալ քրդերը, հայկական կոտորածների իրագործման ճանապարհին սուլթան Աբդուլ Համիդ II-ի մշակած անմարդկային և սարսափելի մի ծրագիր էր։ «Քրդական ցեղերը կույր գործիք դարձան սուլթանի ձեռքին՝ նրա քաղաքականությունը իրագործելու համար» (էջ 58)։ Բացի վերոհիշյալից, հեղինակը հակիրճ խոսում է նաև հայ դյուցազու վիճակի, նրա կրած բռնությունների, ծանր հարկատեսակների մասին և այլն։

XIX—XX դդ. հայկական կոտորածները լուսաբանվել են գրախոսվող աշխատության երրորդ գլխում (Հայկական ջարդերը XIX—XX դարերում)։ Սալեհը փորձում է ցույց տալ, որ XIX դարի 80-ական թթ. կայսրությունում սկսեց արծարծվել Հայկական հարցը և մշակվեց հակահայկական գործողությունների դաժան մի ծրագիր։ Դեռևս 1884 թ. մեծ վեզիր Քուչուկ Սայիդ փաշան իր մի հայտարարությամբ գտավ այդ հարցի լուծման ամենակարճ և արդյունավետ ուղին՝ «Հայկական հարցին վերջ տալու ամենակարճ եղանակը հայ ժողովրդի բնաջնջումն է» (էջ 67)։ Եվ դա XIX դարի 90-ական թթ. դարձավ սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական գործունեության առաջնահերթ խնդիրը, որը գործնականում կիրառվեց կիսաանկախ Սասունի նկատմամբ։ Նրա «Սասունը առանց սասունցիների» կարգախոսով էլ «1891—1894 թթ. սկսվեցին Սասունի ողբերգական

իրադարձությունները, որոնք 1895 թ. դուրս եկան նրա սահմաններից և ընդգրկեցին հայկական բոլոր շրջանները» (էջ 68)։

Մենագրության մեջ գդալի տեղ է հատկացվել Սասունի դեպքերին, Թուրք-քրդական զորքերի և հրոսակախմբերի հարձակումներին, Սասունի հերոսական պաշտպանությանը և այլն։ Այստեղ ևս մեկ անգամ շեշտվում է հայկական շարժերում քրդերի խաղացած բացասական դերը. ընդգծվում է, որ ցեղակիցներին «չիհադի» (սրբազան պատերազմի) մղելով, քուրդ ցեղապետերը իրենց ժողովրդին մեղսակից դարձրին հակահայկական այդ ոճրագործություններին (էջ 68—69)։ Այլևայլ խնդիրների քննարկումից հետո, կապված պանթուրքիզմի և նրա մեծապետական նկրտումների ու պլանների հետ, գրքի հեղինակը նշում է, որ հայկական կոտորածների բարբարոս ծրագիրը իրականացվեց գլխավորապես XIX դարի վերջերից. սակայն ավելի խոր բնույթ կրեց XX դարի առաջին քառորդում, մասնավորապես երիտթուրքերի հեղափոխությունից հետո (1908 թ.)։ Մինչև իշխանության գլուխն անցնելը երիտթուրքերը մեծ խոստումներ էին տալիս հպատակ ժողովուրդներին, այդ թվում նաև արևմտահայությանը։ Սակայն նրանց օրոք տառացիորեն ոչինչ չփոխվեց. ընդհակառակը՝ նրանք դիմեցին ավելի վայրագ և արյունալի մեթոդների։ Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ճակատագրի լուծման խնդրում երիտթուրքերը շարունակեցին իրենց նախորդների քաղաքական գործը (էջ 93—94)։ Հայկական հարցը «լուծելու» համար նրանք հմտորեն օգտագործեցին պատեհ առիթը՝ առաջին համաշխարհային պատերազմը և պետական մակարդակով ձեռնարկեցին մի անմարդային ծրագրի իրականացումը՝ հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացումը։ Այդ դիրտ քաղաքականության զոհ դարձավ արևմտահայ ավելի քան մեկուկես միլիոն խաղաղ բնակչություն, իսկ ողջ մնացածները հեռացան ավանդական հայրենիքից։

Չխորանալով դանդաղ մանրամասնություններ մեջ՝ Սալեհը ընդհանուր գծերով արար մտավորականության դատին է ներկայացնում կազմակերպված և դանդաղածային կոտորածները Արևմտյան Հայաստանում, դրանց իրագործման ուղղությամբ գործադրած սարսափելի միջոցառումները, աքսորը, խոշտանգումների զարհուրելի եղանակները և այլն (էջ 95—102)։

Մենագրության չորրորդ գլխում (Թուրքերի անհիմն պնդումները հայկական կոտորածների մասին) խնդրո առարկա է դարձել ժամանակակից Թուրքիայի հակահայկական ստոր պրոպագանդան։ Շրջանառության մեջ դնելով դանազան նյութեր՝ արար պատմաբանը ընթերցողների ուշադրությունն է հրավիրում Թուրքիայում ծավալվող այն եռանդուն աշխատանքների վրա, որոնք հայկական ցեղասպանությունը մերժելու, պատմական փաստերն ու եղելությունները խեղաթյուրված տեսքով ներկայացնելու նպատակ են հետապնդում։ Այդ առթիվ նա գրում է, որ ժամանակակից «Թուրքիայում պատմաբանները, լեզվաբանները, իրավաբանները, գրողները, արվեստագետները, մամուլը և լրատվության այլ միջոցները միգեր են գործադրում մոլորության մեջ գցելու համաշխարհային հասարակական կարծիքը... Թուրք պատմաբաններն ու դիվանագետները եռանդուն գործունեություն են ձեռնարկել՝ ժխտելու օսմանյան պետության և «իթիհադ վե թերաքի» միության կիրառած քաղաքականությունը հայության ոչնչացման գործում... Ինքնապաշտպանության նպատակով Թուրք պատմաբանները հայերի մղած պայքարը բնութագրում են իբրև ահաբեկչություն և հայ ֆիդայիներին համարում են ահաբեկիչներ...» (էջ 105—106)։

Հենվելով փաստական արժանահավատ տրվյալների վրա՝ Սալեհը սուր քննադատության է ենթարկում Թուրքիայի հակահայ այդ անարարոյական և լկի պրոպագանդան, ընդգծում Թուրք կեղծարարների հրեշավոր ջանքերի և գործադրած միջոցների անմարդային բնույթը, սնանկությունը։ Նա իրավացիորեն նշում է, որ Թուրքիան նման քայլերի է դիմում պետական մակարդակով, որով և ջանում է մերժել հայ ժողովրդի արդար պահանջը։ Հեղինակը միաժամանակ անդրադառնում է այդ ոճրաղործության հեռավոր արմատներին, կայսրության ադդահալած, բռնի թուրքացման ու ձուլման քաղաքականությանը, որը կիրառվեց ոչ միայն հայերի, այլև հպատակ բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև արաբների նկատմամբ։

«Միջազգային համընդհանուր պատասխանատվությունը հայերի կոտորածների համար» գլխում քննարկման առարկա են դարձել Հայկական հարցի և առհասարակ հայկական արյունալի չարդերի նկատմամբ իմպերիալիստական տերությունների գրաված դիրքը, դիվանագիտական վարքագիծը և միջազգային համաժողովներում։ Դատապարտելով իմպերիալիստական գրեթե բոլոր պետությունների մերձավորարևելյան քաղաքականությունը և կեցվածքը հայկական կոտորածների հանդեպ՝ նա նշում է, որ «այդ բոլոր երկրներն անխտիր աստիճանա-

բար վաճառեցին Հայաստանը և Հայկական հարցը թաղեցին Լոզանում» (էջ 161)։ Այնուհետև՝ հեղինակը դանում է, որ Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը հավասար պատասխանատվություն են կրում Հայկական հարցի ձախողման և նրա այդպիսի ողբերգական վախճանի համար։ Այնուհանդերձ, այդ երկրներում դանվեցին ազնիվ և բարի կամքի տեր շատ մարդիկ, որոնք դատապարտեցին իրենց պետությունների դիրքորոշումը Հայկական հարցում և ձայն բարձրացրին ի պաշտպանություն արևմտահայության։

Հայկական ջարդերի դժոխային այդ ժամանակներում՝, նշում է նա, իբրև մեղմող ժողովուրդ, միանդամայն այլ դիրք դրավեցին արարները, որոնք օգնության ձեռք մեկնեցին աքսորյալ հայերին՝ շատերին փրկելով ջարդերից։ Արար շատ պաշտոնյաներ իրենց հնարավորությունների շրջանակներում մեղմացնում էին Կ. Պոլսից ստացած հրամանները, կարգադրությունները։ Առանձին վայրերում գտնվեցին նույնիսկ որոշ մարդիկ, որոնք, կյանքը վտանգի ենթարկելով, հրաժարվեցին Բարձր Դռան ցուցմունքները կենսագործելուց։ Այդպիսի պաշտոնյաներից էր, նրա կարծիքով, Դերզորի արար վալի Ալի Սավադ բեյը։ Երբ վերջինս Կ. Պոլսից հրաման ստացավ աքսորյալ հայերին բրել, դնալի անապատի խորքը, նա կենտրոնին հղեց հետևյալ հեռագիրը. «Փոխադրամիջոցները չեն բավարարում այդ մարդկանց տեղահանելու համար։ Եթե դուք ցանկանում եք նրանց (հայերին —Ա. Փ.) սպանել և ոչնչացնել, ապա ես դա չեմ կարող անել և հրաման տալ» (էջ 166)։ Այս հեռագրից անմիջապես հետո պաշտոնից հեռացվեց Ալի Սավադ բեյը, որին փոխարինեց հայտնի արյունարբու Զեքի բեյը։

Նույն գլխի «Ժամանակակից թուրքական վարչակարգի պատասխանատվությունը հայկական կոտորածների համար» բաժնում Սալեհը կրկին անգամ դատապարտում է թուրք տիրապետող շրջաններին, որոնք պնդում են, թե իբր «պատասխանատվություն չեն կրում իրենց կողմից չիրականացված հանցագործության համար»։ Դրանով, նշում է նա, թուրք ղեկավարները մինչև օրս շարունակում են նույն հանցագործությունը հայոց արդար դատի նկատմամբ (էջ 178)։ Չնայած 1919 թ. ռազմական դատարանում Մուստաֆա Քեմալը ընդունեց «իթիհադականներից» դաժան ոճրագործությունները, սակայն, որքան տարօրինակ է, արդի թուրք ղեկավարները ազգային հերոս են հռչակել Թալեաթ փաշային (էջ 179—180)։ Ապա հեղինակը հանգամանորեն խոսում է Հայկական հարցի միջազգային արձագանքների, նրա պաշտպանության առթիվ ընդունված զանազան փաստաթղթերի, որոշումների մասին և այլն։

Գրախոսվող աշխատության վեցերորդ գլխում դանազան խնդիրներ վերլուծելու թվում Սալեհն անդրադառնում է նաև ԼՂԻՄ-ի պրոբլեմին, 1988 թ. փետրվարից մեղանում սկիզբ առած իրադարձություններին և արաբական պարբերական մամուլի էջերում տեղ գտած դրանց արձագանքներին։ Այդ կապակցությամբ նա նշում է, որ ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հարևան հանրապետությանը անարդարացիորեն բռնակցվեց Ստալինի օրոք և այսօր հայերը այդ մարդի վերամիավորման պահանջը ներկայացնում են ոչ թե նրա համար, որ բնակեցված է գլխավորապես հայերով, այլ, որ այն եղել է պատմական Հայաստանի անկապտելի մի հատվածը (էջ 222—225)։

Աշխատության վերջին՝ յոթերորդ գլխում (Հայերը Լիբանանում) Սալեհը համառոտակի լուսաբանում է լիբանանահայ գաղթօջախի պատմությունը՝ սկսած վաղ շրջաններից մինչև մեր օրերը՝ կանգ առնելով գլխի Լիբանան կատարած հայերի արտագաղթերի, դրանց դրդապատճառների և այլ խնդիրների վրա։ Ապա հանգամանորեն անդրադառնում է լիբանանահայ համայնքի մշակութային, տնտեսական, քաղաքական, հասարակական կյանքին և այլն։

Աշխատության հավելվածում զետեղվել են զանազան փաստաթղթեր, հայտարարություններ կապված հայկական ցեղասպանության հետ։

Ամփոփելով ասենք, որ գրախոսվող աշխատությունը, անկասկած, զերծ չէ թերություններից, անճշտություններից և չպատճառաբանված կրկնություններից։ Սակայն դրանք բնավ չեն նսեմացնում նրա գիտական արժանիքը, որի կողքով անտարբեր չի անցնի Հայկական հարցի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետը։ Այն պետք է գնահատել որպես արարական հայագիտության մի լուրջ ձեռքբերում, որը մեծապես կծառայի նաև հայ-արաբական ընդլայնվող բարեկամությանը և մեր երկու ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդմանը։

Ա. Պ. ՓՈՂԱԴՅԱՆ